



ԳԷՈՐԳ ՄԵԼԻՔ-ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու

Գերակայ ռազմավարական հետազոտությունների կենտրոն

ՎԱԶԱԳԱՆ ԱԻԱԳԵԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու, ԵՊՀ

ՅՈՒԹԻ ԳՐՔԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՂԵՐՍՆԵՐԸ¹

Յոթի գիրքն Աստուածաշնչի ամենախորհրդալուր եւ գրական առումով ամենահարուստ դրուագներից է: Շատ հետազոտողներ համոզուած են, որ Յոթի պատմութիւնը եւ դրանում արծարծուող գաղափարները ունեն միջագետքեան կամ եգիպտական արմատներ:

Ամենայայտնի տեսակէտն այն է, որ Յոթի գիրքը հիմնուած է աւելի հին, Միջագետքում ծնունդ առած՝ «տառապող արդարի» մասին պատմութեան վրայ: Այս կապակցութեամբ յիշատակելի է «Լուգլու Բէլ Նեմէքի»-ն, որ յաճախ անուանում են «Բաբելոնեան Յոթ»: Սա մի բնագիր է (Ք. ա. Բ. հազարամեակ), որտեղ բարձրաստիճան մի պաշտօնեայ տառապում է հիւանդութիւններից եւ զրկանքներից՝ շնայած իր հաւատարմութեանը աստուածներին: Միւսը «Շումերական Յոթ» (Մարդը եւ իր Աստուածը) անուանուած ստեղծագործութիւնն է, որում ներկայացուած է անհասկանալի տառապանքների պահին մարդու արտաբերած աղերսն առ Աստուած²: Այս ստեղծագործութեան ուսումնասիրող Կրամերը լրջագոյն փաստարկներով հիմնաւորում է, որ տառապող արդարի պատմւմը գոյութիւն է ունեցել հրէական գրաւոր մշակոյթից դարեր առաջ: Միջագետքեան զուգահեռներից բացի հետազոտողները նաեւ եգիպտական ազդեցութիւն են նկատում Յոթի գրքում՝ նմանութիւններ տեսնելով հին

¹* Ստացուել է՝ 8.08.2025, գրախօսուել է՝ 9.09.2025: էլ. հասցէ՝ targmanich1@mail.ru:

² SAMUEL NOAH KRAMER, "The 'Sumerian Job'" 1956:

եգիպտական իմաստութեան հետ՝ ի նկատի ունենալով «Խոնջացեալ մարդու գրոյցն իր հոգու հետ» ստեղծագործութիւնը, որ քննարկում է կեանքի իմաստը, տառապանքը եւ մահուան ցանկութիւնը, ինչը շատ նման է Յոբի յուսահատական մենախօսութիւններին³: Եւ լիովին հասկանալի ու բնական է, որ «Ինչպէս կարդալ Աստուածաշունչը» գրքի հեղինակը մանրամասն դիտարկում է, թէ իսրայէլական իմաստութեան գրականութիւնը (ի թիւս այլոց նաեւ Յոբի գիրքը) սնուել է Մերձաւոր Արեւելքի ընդհանուր մշակութային ժառանգութիւնից: Յոբի բնագրում կան բազմաթիւ վկայութիւններ առ այն, որ պատմութիւնը հրէական չէ. առաջինն աչքի է ընկնում պատումի աշխարհագրութիւնը. Յոբը բնակուում էր Աւսիդ քաղաքում՝ Ուս երկրում, որ «վստահաբար Իսրայէլը» չէ: Յաջորդ ուշագրաւը անունների հանգամանքն է. Յոբի եւ իր այցելուների անունները հրէական չեն: Առաւել ծանրակշիռ է Աստծու անուանումը. բանաստեղծական հատուածներում հեղինակը հիմնականում օգտագործում է էլոհիմ կամ Շադդայ (ընդհանուր սեմական անուններ), այլ ոչ թէ Իսրայէլի ազգային Աստծու անունը (Եահվէ), ինչն առնուազն յուշում է պատմութեան արտաքին ծագման մասին:

Այստեղ պէտք է նկատել, որ ստեղծագործութեան արմատները պարզելիս անունները յոյժ կարեւոր կռուաններ են, եթէ չասենք ապացոյց, եւ կարելի է ասել, որ Ուս-Ուզ երկիրը ոչ միայն Յոբի հայրենիքն է, այլ նաեւ պատումի, որովհետեւ այն ցոյց է տալիս նիւթի ծագման վայրը՝ թէ որտեղ է պատահել դէպքը: Ուստի աշխարհագրական ակնարկները խիստ կարեւոր են: Օրինակ՝ աշխարհագրական մի յուշում կայ ԼԲ. 2–3-ում. «Եւ բարկացաւ Եղիուս Բարաքիելի Բուզացի, յազգականութենէ Արամայ՝ աշխարհին Աւստացւոց, բարկացաւ Յոբայ յոյժ. զի երեւեցոյց զանձն արդար առաջի Տեառն»: Մեկնութիւնների ճնշող մեծամասնութիւնը Արամն Արամեացիներին է վերագրում, սակայն ինչպէս գիտենք Հայոց ազգային աւանդութեան համաձայն Արամը Հայ ժողովրդի նահապետներից մէկն է, եւ անունն այդ՝ Յաբէթեան, Թորգոմեան, Ասքանազեան, Հայկազեան որոշիչների հետ միասին մեր հին հեղինակները մշտապէս կիրառել են Հայ ժողովրդի կապակցութեամբ. «Արշակ արքայ Հայոց Մեծաց եւ ամենայն նախարարք Արամեան ազինս» (Մովսէս Խորենացի, Գ., իթ.):

³ Այս կապակցութեամբ տե՛ս JAMES ALLEN, *The Debate between a Man and His Soul*, 2011:

Ուշադրութեան արժանի է նաեւ Յոբի հարազատին տրուած որոշիչը, որ գրաբար թարգմանութեամբ՝ (Ի. 1. «Կրկնեալ անդրէն Սովփարայ Միւնեցոյ ասէ...») խիստ նմանուծ է Երեմ. ՄԱ. 27-ում յիշուած տեղանուանը. «Կոչէք ի վերայ դորա զթագաւորութիւնս Արարատայ, Միւնոյ, եւ Ասքանազայ, կացուցէք ի վերայ նորա զօրագլուխ, հանէք ի վերայ նորա զերկարս իբրեւ զմարախ մագեղ»:

Սակայն Սովփար Միւնեցու երկրի Արարտեան աշխարհին մերձ գտնուելու հանգամանքն այսօր առաւելաբար մերժուած է՝ Միւնեցոց հայրենիք նկատելով Արաբիան: Թէ որքանով է դա ընդունելի, թերեւս լոկ այդ տեսակէտի կողմնակիցներին է յայտնի: Բայց մեր կարծիքով Արաբիայի ջերմ միջնորոտին բնորոշ չէ, եթէ շասենք խորթ է խնդրոյ առարկայ՝ Զ. 16–18 միտքը: Ըստ ամենայնի դժուար թէ այս պատկերը կարողանար ստեղծել ամուսնը +40–60-ին դիմակոյղ, իսկ ձմռանը +15–20-ը վայելող մարդը: Ոչ միայն իր, այլ առաւել եւս իր շրջապատի եւ յաջորդների համար անհասկանալի պիտի լինէին ոչ միայն ձեան եւ սառույցի պատկերները, այլ նաեւ այդ բառերն ընդհանրապէս: Ուստի մեր կարծիքով «Որք սարսէին յինէն, արդ ահաւասիկ հասին ի վերայ իմ: Իբրեւ զձիւն կամ իբրեւ զսառն պաղեալ որ հալիցի ի հասանելոյ ջերմութեան, եւ ո՛չ ճանաչիցի թէ ո՞րպէս էր. նոյնպէս եւ ես լքայ յամենեցունց, կորեայ եւ տնանկացայ» տողը երկնողին այլ վայրում է հարկաւոր որոնել:

Աշխարհագրական առումով կարեւոր է, որ Յոբի գիրքը հերոսին ներկայացնում է իբրեւ արեւելեան. «Եւ էր այրն այն ազնուական քան զամենայն արեւելեայն» (Ա. 3): Հետեւաբար հարց է առաջանում, թէ սուրբգրական եւ ընդհանրապէս վաղնջական աւանդութեամբ ո՞ր տարածքները կարող են դասուել արեւելեանների շարքը: Այս կապակցութեամբ արձանագրելի է, որ հին աղբիւրներում Հայոց Արարտեան երկիրը պատկերացուել է մերթ հիւսիսում, մերթ արեւելքում⁴: Տարբեր են նաեւ Յոբի հայրենի Ուզ երկրի աշխարհագրական դիրքի վերաբերեալ կարծիքները: Տեղին է յիշելը, որ ի շարս այլոց, այն երբեմն նոյնացուել է նաեւ Հայաստանի հետ⁵,

⁴ Առիթ ունեցել ենք անդրադառնալու՝ աստուածաշնչեան եւ ընդհանրապէս հին աւանդութիւններում Հայոց Արարտեան երկիրը մերթ հիւսիսում, մերթ արեւելքում պատկերացնելու հանգամանքին. տես Աստուածաշնչի անգլերէն մեկնութիւնները «հանուրց հիւսիսականաց վեհագոյն»ի մասին, «էջմիածին», 2019, ժԲ., էջ 77–89:

⁵ Տես <https://biblehub.com/commentaries/job/1-1.htm> Gill's Exposition of the Entire Bible:

ինչը յուշում է, որ Յոբի պատմութեան մէջ հայկական հետք կարելի է եւ պէտք է որոնել:

Մենք յիշատակեցինք Յոբի գրքում Աստծուն տրուող անունները՝ նշելով գրանց ընդհանուր սեմական բնոյթը: Գիտենք, որ յուզայականութեան հիմնարար գաղափարը միաստուածութիւնն է, որպէս եւ անցաւ քրիստոնէութեանը: Յոբի Աստուածը նմանութիւն ունի միաստուածութեանը: Անշուշտ, եւ դրա լաւագոյն օրինակը Յոբի Թ. 5–8-ում նկարագրուած տէրունական զօրութիւնն է, որի պարագային Հօրը շրերի վրայ քայլում է որպէս գետնին՝ ինչպէս աւելի ուշ Յիսուս պիտի անէր⁶. «Որ հնացուցանէ զլերինս եւ ո՛չ գիտեն. որ տապալէ զնոսա բարկութեամբ: Որ շարժէ զառի ներքոյս երկնից ի հիմանց, եւ սիւնք նորա դողան: Որ ասէ արեգական եւ ո՛չ ծագէ, եւ ընդդէմ աստեղաց կնքէ: Որ ձգեաց զերկինս միայն, եւ շրջի ի վերայ ծովու իբրեւ յատակի»:

Այժմ փորձենք տեսնել, թէ անմիջականորէն ինչ յատկանիշներ են վերագրուած Յոբի Աստծուն, եւ արդեօք այստեղ գերական միաստուածեան սկզբունքն է: Առանց երկարաբանելու կցանկանայինք ասել, թէ անգամ թուցիկ դիտարկմամբ կարելի է նկատել, որ Յոբի գրքում Աստծուն տրուած շատ բնութագրումներ որոշակիօրէն վերագրելի են ամպրոպի աստուածութեանը (այս անուան տակ ընկալում ենք անձրեւի, ձեան, կարկուտի, կայծակի, ծիածանի եւ մէգի ու մառախուղի միասնութիւնը), հետեւաբար միաստուածեան չեն:

Ստորեւ բերում ենք Յոբի գրքի այն հատուածները, որ մեր կարծիքով աղերսում են մեր նշած ուժերին: Միայն թէ այստեղ պէտք է մշտական ուշադրութեան կենտրոնում պահել մի հանգամանք. իբրեւ սկզբնաղբիւր կիրառել ենք սուրբ Դրոց՝ Յովհաննէս վրդ. Զօհրապեանի աշխատասիրած օրինակը (1805, Վենէտիկ), եւ ասենք է. 12-ի վիշապը այլ թարգմանութիւններում կարող է դառնալ «կէտ ձուկ»: Բայց անգամ այս դէպքում, երբ ի մտի ենք պահում նիզակ-տէգով մարտնչող Թորգոմ-Տիգրան-Վահագնի յատկանշական կողմերը՝ Յոբի գրքում ուրուագծուող էութեան հարազատութիւնն ամպրոպի աստուածութեանը ակնառու է:

Ահա Յոբի Դ. գլխում (10) կարդում ենք. «Զօրութիւն առիւծու, գոչիւն մատակ առիւծու, պերճութիւն վիշապաց՝ շիջա՛ւ»: Տողացիում⁷ երեք դէպ-

⁶ Հմմտ. Մատթ. ԺԴ. 22–33, Մարկ. Զ. 45–52, Յովհ. Զ. 16–21:

⁷ Տես <https://biblehub.com/interlinear/job/4-10.htm>:

քում էլ «առիւծ» է: Այսինքն գրաբար թարգմանութիւնը մի կողմից հեռացել է բնագրից, սակայն միւս կողմից մօտեցել է ամպրոպային աստուածութեան նկարագրին:

Յոբի Աստծուն աւելի մանրամասն է բնորոշում Ե. գլխի հատուածը (8–17). «Բայց սակայն ես խնդրեցից ի Տեառնէ, եւ զՏէր զամենեցուն իշխանն կարդացից: Որ առնէ զմեծամեծս եւ զանքնինս, եւ զփառաւորս եւ զհրաշակերտս որոց ոչ գոյ թիւ: Որ տայ անձրեւ յերկիր, առաքէ զջուրս ի նեւրոյ երկնից: Որ առնէ զխոնարհս ի բարձունս, եւ կանգնէ զկորուսեալս: Եւ փոփոխէ զխորհուրդս խորամանկաց, եւ ոչ գործեսցեն ձեռք նոցա զճշմարտութիւն: Որ հասանէ իմաստնոց հանճարով, եւ զխորհուրդս բազմանիւթաց յիմարեցոյց: Ի տուէ պատահիցէ նոցա խաւար. եւ ի միջօրէի իբրեւ ի գիշերի խարխափեսցեն: Սատակեսցին պատերազմաւ. եւ աղքատն ապրեսցի ի ձեռանէ հզօրին: Եղիցի յոյս տկարի. բերան անիրաւի խցցի»:

Ինչպէս տեսնում ենք բոլորի իշխանը, որ խոնարհներին է բարձրացնում, ոտքի կանգնեցնում կորուսեալներին... իբրեւ աւելի մեծ եւ նկատելի գործ անձրեւ է ցօղում երկրի վրայ, ուղարկում ջրերը երկնքի ներքոյ, այսինքն դրսեւորում է մեր նշած Աստուածութեանը բնորոշ յատկանիշներ, եւ նա ոչ թէ միաստուածեան էութիւն է, այլ յատկապէս նա է, որ տայ անձրեւ յերկիր, առաքէ զջուրս ի նեւրոյ երկնից:

Այնուհետեւ Յոբի Զ. գլխից իմանում ենք, որ Տէրը նետերով է հարուածում (4–5). («Զի նեւր Տեառն ի մարմնի իմում, եւ սրտմտութիւն նորա ծծէ զարիւն իմ. յորժամ սկսանիմ խօսել կտտեն զիս: Իսկ արդ՝ զիհարդ, միթէ տարապարտո՞ւց խանչիցէ ցիւռ, բայց եթէ կերակուր խնդրիցէ»): Հպանցիկ նկատելով, թէ հին Հայոց հաւատալիքներում ցիւրը եւս շրջանառում է ամպրոպայինի, կամ գոնէ վիշապակոթողների հետ*, այստեղ Տիրոջ նետերի կապակցութեամբ ընդունենք, որ մեր «ամպրոպական» վարկածի պարագային աւելի տեղին կլինէին նիզակը կամ տէգը: Մինչդեռ Ի. 23–24-ում դարձեալ կարդում ենք, որ խոցման զէնքը նետն է. «Ամենայն տազնապ հասցէ ի վերայ նորա, թէ զիհարդ լնուցու որովայն նորա: Առաքեսցէ ի վերայ նորա զսրտմտութիւն բարկութեան. արկցէ զնովաւ ցաւս. եւ մի՛ ապրեսցի ի ձեռանէ երկաթոյ: Խոցոտեսցէ զնա աղեղն պղնձի. անցցէ ընդ մարմինս նորա նետ»։ Ամենակարողը խոցում է նետով Լ. 13-ում. «Մերկացոյց զպատմուճան իմ. նեւիր՝ իւրովք խոցոտեաց զիս. մատուցեալ որպէս եւ կամի»։ Բայց փոխարէնը ԺԶ. 10–14-ում տեսնում ենք, որ Աստուած հէնց տէգ է կիրառում՝ այդու մօտենալով ամպրոպի աստուածու-

թեանը. «Բարկութեամբ վարեալ կործանեաց զիս. կրճտեաց ի վերայ իմ գատամունս: Նեա՛ք հինից նորա խաղացին ի վերայ իմ. տիգաւ աչաց խաղաց ի վերայ իմ: Արագ արագ եհար զիս ի ծունկս. միանգամայն ասպատակեցին ի վերայ իմ: Քանզի մատնեաց զիս Տէր ի ձեռս անիրաւին, եւ ի մէջ ամպարշտաց ընկէց զիս: Մինչդեռ ի խաղաղութեան էի, քայքայեաց զիս. առեալ զվարսից իմոց փետտեաց զիս: Կացոյց զիս իբրեւ զդէտ. պատեցին զիս տէգ՛»:

Օտար թարգմանութիւններից հեռանում է նաեւ է. գլխի 12-րդ բանատողը՝ կրկին յիշատակելով ամպրոպային խորհրդանիշը. «Միթէ ծո՛վ իցեմ կամ վիշա՛պ՝ զի կարգեցեր զինեւ պահ՛»:

ԻԲ. 14–15-ում դարձեալ բնութեան դիտարկուող պատկերներին բնորոշ երեւոյթներն են՝ ամպը եւ մէգը. «Եւ ասացեր թէ զի՛ ծանեաւ Հօրն. կամ թէ ի միգի դատիցի: Ամպ ծածկութիւն նորա, եւ ո՛չ երեւեսցի. եւ ընդ ծիր երկնից շրջեսցի»: ԻԶ. 2–14-ում Ամենակարողը երկիրը հաստատել է ոչնչի վրայ, դրանով իսկ դրսեւորելով միաստուածեան յատկութիւն, սակայն դրա հետ մէկտեղ ինքը նաեւ ջրերն է հաւաքել իր ամպերի մէջ՝ ներկայացնելով ամպրոպածին բնաւորութիւն, իսկ թարգմանիչը հատուածը հարստացրել է մէգ, վիշապ որոտ բառերով, որոնց այլ հոմանիշների կիրառման դէպքում գուցէ այդքան ակնառու չէր լինի ամպրոպածին լինելու հանգամանքը. «Յո՛ մօտիցիս, կամ ո՛ւմ օգնական լինելոց իցես: Ո՛չ ապաքէն այնմ որոյ բազում է զօրութիւն, եւ որոյ հզօր է բազուկ իւր: Ընդ ո՛ւմ խորհրդակից լինիցիս. ո՛չ ընդ այնմ որոյ ամենայն իմաստութիւն է: Զո՛յր զհետ երթիցես, եթէ ոչ որոյ մեծ է զօրութիւն. ո՛ւմ պատմեցեր բան. եւ ո՛յր շունչ՝ ել ի քէն: Միթէ սկայք ծնանիցին ի ներքուստ ջրոյ՞⁸, եւ ի դրացեաց նորա: Մերկ են դժոխք առաջի նորա՝ եւ չիք զգեստ կորստեան: Զգեաց զհիւսախ զոչընչիւ. կախեաց զերկիր ի վերայ ոչնչի: Մտա՛է զջուս յամպս իւր, եւ ոչ պատառեցաւ մէգ ի ներքոյ նորա: Որ ունի զերեսս աթոռոյ, թռուցանէ նովաւ զմէգ իւր: Հրաման պատեաց զերեսօք ջրոյ՞՝ մինչ ի վախճան լուսոյ ընդ խաւարի: Միւնք երկնից թռեան եւ զարհուրեցան ի սաստէ նորա: Զօրութեամբ հանդարտեցոյց զծով. իմաստութեամբ նորա տարածեալ է համատարածն: Աղիս երկնից սարսեցին ի նմանէ. հրամանաւ իւ-

⁸ Ուղղակի նշենք, որ շնայած ջրի խորքից հսկաներ չէին ծնում, բայց ջրի աստուածութեան հետ սերտօրէն կապուած Սասունցի հսկաները ջրի տակից էին հանում իրենց զէնքերն ու նժոյգին:

րով սպան զվիշապն ապստամբ: Ահա այս է մասն ճանապարհի նորա: Եւ տակաւին զընթաց բանից նորա լուիցուք նովաւ. զգորութիւն որոտման նորա ո՞ գիտէ՝ յորժամ առնիցէ»:

Արդէն Լէ. 4–16-ում լսում ենք Հզօրի ձայնը, որ որոտն է, եւ ահանատես ենք լինում, թէ ինչպէս է ձիւն տեղում, ջուր յեղեղում, ամպերը ցանում. «Ձկնի նորա գոչեսցէ բարբառ. որոտայցէ ձայնիւ բարձրութեան իւրոյ. եւ ոչ փոխանակեսցէ գնոսա. զի լսելի արասցէ զձայն իւր. եւ որոտացէ Հզօրն սքանչելի բարբառով իւրով. քանզի արար մեծս՝ զոր ոչ գիտէաք: Հրաման տայ ձեան՝ թէ լե՛ր յերկրի. եւ ձմերայնոյ անձրեւաց ըստ զօրութեան իւրեանց է լե՛ր յերկրի. եւ ձմերայնոյ անձրեւաց ըստ զօրութեան իւրեանց: Ի ձեռին ամենայն մարդոյ կնքէ, զի ծանիցէ ամենայն մարդ զիւր տկարութիւն: Մտին գազանք ի դադարս, ղօղեցին ի խշտիս: Ի շտեմարանաց ելանեն ցօղֆ, եւ ի բարձունդակաց ցուրտ. եւ ի շնչելոյ Հզօրին տացէ սառամանիս: Յեղեղու զջուրս որպէս եւ կամի. եւ զընտիր ամպ ցանեսցէ: Յրուէ մէզ զլոյս նորա. եւ ինքն դարձուցէ զըրջանակս Գիտեմք զի Աստուած եղ զգործս իւր. լոյս արար խաւարի: Գիտէ զքննութիւն ամպոց. արհաւիրք են յանցանք շարագործաց»:

Բնութեան տարերքներին՝ ձիւն, կարկուտ, սաստիկ անձրեւ ահանատես ենք լինում նաեւ ԼԸ. 22–41-ում, ուր յայտնուում է նաեւ վիշապը. «Երթեա՛լ իցես ի շտեմարանս ձեան. եւ զգանձս կարկառի տեսեա՛լ իցես: Համբարեա՛լ կայցէ քեզ ի ժամանակս թշնամեաց, յօր մարտի եւ պատերազմի: Ուստի՛ ելանիցէ եղեամն. կամ սփռեսցի հարաւ ի ներքոյ երկնից: Ո՞ պատրաստեաց զհոսանս սաստիկս անձրեւաց, եւ զճանապարհս ամպոպաց տեղեալ յերկիր ուր ոչ գոյ մարդ յանապատ յանմարդի, յագեցուցանել զանկոխն եւ զանշէն, եւ բղխեցուցանել զբոյս դալարոյ: Ո՞ է հայր անձրեւի, եւ ո՞վ է որ ծնաւ զշաղս ցօղոյ: Յո՞յր արգանդէ ելանէ սառն, եւ զեղեամն ո՞ ծնաւ յերկինս, որ իջանէ իբրեւ զջուր ծորեալ. եւ զերեսս երկնից ո՞ հալեաց: Խելամո՞տ իցես կարգի Բազմաստեղաց. եւ քո բացեա՛լ իցէ զպատրուակ Հայկին: Կամ բանայցես զՄազարովթն ի ժամանակի իւրում. եւ զԳիշերավարն ի վերայ վարսից իւրոց ածիցէս ընդ նոսա: Գիտիցէս զըրջանակս երկնից, կամ առ հասարակ զլեալսն ի ներքոյ երկնից: Կոչիցէս զմէզ բարբառով. եւ գողութեամբ լի սաստիկ ջրով լուիցէ քեզ: Արձակիցէ՛ս շանթս՝ եւ գնայցեն. եւ ասիցեն ցքեզ թէ զի՛նչ է: Ո՞վ ետ կանանց իմաստութիւն ուտայնանկութեան՝ կամ հանճար նկարակերտութեան: Ո՞ թուէ զամպս իմաստութեամբ, եւ զերկինս յերկիր խոնարհեցոյց. եւ հեղեալ կայ իբրեւ զհող

փոշի. մածուցի զնա իբրեւ զվիմաւ խորանարդ: Որսայցնս առիծուց կերակուր. եւ զանձինս վիշապաց յագեցուցանիցնս: Սարսեցին ի խշտիս իւրեանց. եւ նստիցին դարանակալք ի մայրիս: Ո՞ պատրաստեաց ագոււուց կերակուր՝ զի ձագք նորա առ Տէր աղաղակեցին. մոլորեալք խնդրեն կերակուր»:

Խ. 16...20-ում յիշատակուած է Վահագնի առասպելում կարեւոր դիրք գրաւող եղէգնը, որին յաջորդում է վիշապը. «Ընդ ազգի ազգի ծառովք ննջէ, առ պրտուով եւ եղեգամբ եւ կնիւնով... Վերացուցանիցնս զվիշապն կարթիւ. դնիցնս պախուրցս շուրջ զցուկով նորա»:

ԽԱ. 6–21-ն արդէն առանձնակի հարազատութիւն է դրսեւորում Վահագնի առասպելի հետ, այն Վահագնի, որի աչկունքն էին արեգակունք, ինչին զուգահեռուում է նկարագրութիւնը Յոբի Աստծու, որի «աչք իբրեւ զտեսիլ արուսեկի»: Եւ եթէ փորձենք տարբերութիւն գտնել այս երկու նկարագրութիւնների մէջ, ապա հայերէնում այն դրսեւորում է միայն արեգակ եւ արուսեակ հոմանիշների ընտրութեամբ: Սակայն սա դեռ ամենը չէ: Կարգալով իմանում ենք, որ Յոբի աստուածութեան ունեւորից ծուխ էր ելնում, եւ բոց էր ելնում նրա բերանից՝ երեւի ճիշտ այնպէս, ինչպէս «ծուխ եւ բոց ելանէր ընդ եղեգան փող»։ «Փոր նորա վահանք պղնձիք, յօդք նորա իբրեւ զվէմ գայլախազ՝ մի զմիոյ կնի կցեալ, եւ օդ ոչ անցցէ ընդ նա: Այր զեղբօր զհետ երթիցէ. զմիմեանց կալցին, եւ մի՛ մեկնեսցին: Ի փոռչելոյ նորա փայլատակումն հատանին. աչք նորա իբրեւ զտեսիլ արուսեկի: Ի բերանոյ նորա լամպարք բորբոքեալք, եւ հատանին անկանին շանք հրոյ: Ընդ որնգունս նորա ծուխ ելանէ հնոցի հրոյ կայծականց: Անձն նորա կայծակումն, եւ բոց ի բերանոյ նորա ելանէ: Ի պարանոցի նորա բնակէ զօրութիւն. առաջի նորա կորուստ ընթանայ: Անդամք մարմնոյ նորա մածեալք. եթէ զեղցէ ի վերայ նորա՝ ոչ խլրտասցէ. զի սիրտ նորա սալացեալ է իբրեւ զվէմ. եւ հաստատեալ կայ՝ իբրեւ զսալ դարբնաց անշարժ: Ի խլրտել նորա ահ գազանաց եւ շորքոտանեաց, եւ զեռնոց երկրի: Եթէ պատահեսցեն նմա արդունք, ոչ ստնանեն զէնք եւ նիզակի: Քանզի համարի զերկաթ յարդ. եւ զպղինձ իբրեւ զփայտ փուտ: Ոչ խոցոտէ զնա աղեղն պղնձի. համարի զորմբաքար խոտ: Եւ իբրեւ զեղէգն համարեցան նմա ուռունք. ծաղր առնէ զշարժումն հրալից: Անկողինք նորա անգր սրեալք. ամենայն ոսկի ծովու ընդ նովաւ իբրեւ զկաւ անբաւ»:

Ասուածն իր մի բերելով՝ թերեւս կարող ենք ընդունել, որ Յոբի Աստուածը ծանրակշիռ նմանութիւններ է դրսեւորում Հայոց ամպրոպային

աստուածութեան հետ: Եւ քանի որ այդ նմանութիւններից որոշներն ուղղակի անկարելի է պատահականութեանը կամ թարգմանական խնդիրներին վերագրել, ուստի պէտք է հիմնովին վերանայել եւ նորովի գնահատել Ուս երկրի եւ Հայոց Արարատեան աշխարհի նոյնութեան, պատումի ծագման աշխարհագրութեան հարցը:

Այստեղ թերեւս պէտք է յիշել նաեւ, որ վիշապներին մեծ տեղ է յատկացուած նաեւ հայկական Արտաշէս-Արտաւազդ վէպում.

Վիշապազունք գողացան
զմանունն Արտաւազդ եւ դէս փոխանակ եղին
(ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՅԻ, Բ., կա.):

Այս վէպի հիմնական մասունքները պահպանել է Մովսէս Խորենացին, եւս մի պատառիկ Գրիգոր Մագիստրոս Պահլաւունին:

Յոբի գրքի հետ գրեթէ լիակատար մի նմանութիւն կարելի է նկատել անէծքների հատուածներում. մի դէպքում Յոբն իր իր օրն է անիծում, միւսում՝ Արտաշէսը որդուն՝ Արտաւազդին:

Յոբն ասում է (Գ. 8–10).

Այլ նգովեսցէ զնա որ նգովելոցն է զօրն զայն.
որ զբռամբ ածելոցն իսկ է զմեծ վիշապն:
խաւարեսցին աստեղք գիշերոյն այնորիկ,
սպասեսցէ, եւ ի լոյս մի՛ տեսցէ, եւ մի՛
տեսցէ զարուեսակն ծագեալ:

Իսկ Արտաշէսն անիծում է իր որդուն.

Եթէ դու յորս հեծցիս
յԱզատն ի վեր ի Մասիս,
զքեզ կալցին քաջք,
տարցին յԱզատն ի վեր ի Մասիս.
անդ կայցես, եւ զլոյս մի՛ տեսցես:

Մեր կարծիքով «զլոյս մի՛ տեսցես» եւ «ի լոյս մի՛ տեսցէ» արտայայտութիւնները, ինչպէս եւ «սպասեսցէ» ու «կայցես» ձեւերը էական հարազատութիւն են դրսեւորում: Իսկ եթէ գրաբար թարգմանութեան «զբռամբ ածելոցն իսկ է զմեծ վիշապն» հատուածը հասկանանք «բռնել մեծ վիշապին» ձեւով հատուածներն աւելի մեծ նոյնականութիւն կդրսեւորեն, որովհե-

տեւ մի դէպքում խօսքը մեծ վիշապ ղեւիաթանին բռնելու մասին է, միւսում դեւ Արտաւազդին, որի տեղը դեւ էին դրել:

Նմանութիւն կարելի է նշմարել նաեւ պատումների հանգամանքներում՝ գլխաւոր հերոսի առողջական եւ հոգեւոր վիճակում, ապրումներում եւ յոյգերում:

Փառքի եւ բարեկեցութեան մէջ ապրած Յոբը, կորցնելով ամեն ինչ, յայտնուել է կեղեքիչ հիւանդութեան ճիրաններում եւ երազանքով ու կարօտով յիշում է երանելի ժամանակները: ԼԱ. գլխում կիրառուած են «Ո՛ տայր մեզ» եւ «Ո՛ տացէ» կաղապարները: Նոյն սկսուածքն ու ապրումներն ունեն նաեւ մահուան մահիճում յայտնուած Արտաշէս արքայի բառերը⁹.

Ո՛ տայր ինձ զծուխ ծխանի
Եւ զառաւօտն նաւասարդի¹⁰
Զվազելն եղանց
Եւ զվարզելն եղջերուաց.
Մե՛ք փող հարուստ եւ թմբկի հարկանեալ
Որպէս օրէնն է թագաւորաց:

⁹ Տե՛ս «Գրիգոր Մագիստրոսի թղթերը», բնագիրն առաջաբանով եւ ծանօթագրութիւններով ի լոյս ընծայեաց Կ. Կոստանեանց, Աղէքսանդրապօլ, 1910, էջ 87:

¹⁰ Այս նաւասարդը ամենեւին պատահական չէ, այլ, ինչպէս գիտենք, նաւասարդ օրը կամ Օգոստոս ժա-ն հին հաւատքով Արամազդի եւ Անահիտի պաշտամունքի, նաեւ Արտաւազդի՝ կապանքներից հնարաւոր ազատման օրն էր: Ըստ Ագաթանգեղոսի՝

«Եւ զվիշատակս վկայիցն բերելոց ժամադրեաց ի տաւն մեծ հռչակել, սնոտեացն պաշտաման ժամանակի՝ դիցն Ամանորոյ ամենաբեր նոր պտղոց տօնին, Հիւրընկալ դիցն Վանատրի, զոր յառաջագոյն իսկ ի նմին տեղոջ պաշտէին յուրախութեան Նաւասարդ աւուր: Զի ժողովեալ ի յիշատակ մեծի երանելոյն Յովհաննու եւ սրբոյ վկային Աստուծոյ Աթանագինէի՝ յայնմ աւուր խմբեալ ի նմին յաւանին տաւնեսցեն» (ՃԺԹ.): Իսկ Յայսմաւուրքը յաւելում է. «Եւ շինեալ սուրբն Գրիգորի ի տեղոջն մեծ եւ փառաւոր եկեղեցի՝ յանուն սուրբ Կարապետին Յովհաննու Մկրտչի, եւ անդ եզ զնշխարս նորա՝ յորում տեղոջ բազում բժշկութիւնք եղեն, եւ լինին մինչեւ ցայսօր, որք հաւատով ապաւինին ի բարեխօսութիւն սուրբ Կարապետին: Եւ սահմանեաց ամ յամէ՝ աշխարհաժողով եւ թագաւորական տօն լինել, որ օր մուտ է Նաւասարդի ամսոյ, որ է Օգոստոսի ժԱ.:

Եւ զի յայնմ աւուր տօնէին հայք ի կոնպաշտութեանն՝ Արամազդայ եւ Անահտայ, եւ առասպելաբանէին վասն Արտաւազդայ՝ որդւոյ Արտաշեսի, եթէ կայ կապեալ ի վեր յազատն Մասիս, եւ ելանէ ի մուտս Նաւասարդի, յորժամ լեզուն երկու շունքն՝ սեաւ եւ սպիտակ զկապանս նորա, եւ առնէ վախճան աշխարհի: Եւ օրինադրեցին քումքն՝ ամենայն արուեստաւորի միանգամ բախել զարուեստն իւր ի մինն Նաւասարդի՝ զի զօրասցի կապանքն Արտաւազդայ:

Արդ զի խափանեցի ստութիւնն, եւ հաստատեցի ճշմարտութիւնն, կարգեաց սուրբն Գրիգոր զօրս զայս համաշխարհական տօն, որով փառաւորի ամենասուրբ Երրորդութիւնն յաւիտեանս յաւիտենից»։ տե՛ս Յայսմաւուրք, Կոստանդնուպօլիս, 1834, Բ. 71–72:

Արքան յիշում է, թէ ինչպէս է վայելել կեանքը եւ նկարագրում է իր որսի գնալու տեսարանը՝ խօսքն աւարտելով «Որպէս օրէնն է թագաւորաց» տողով: Արքայի շուրթերից ելած «Ո՛ր տայր ինձ» տողին գոնէ կառուցուածքով խիստ հարազատ «Ո՛ր առնէր զիս» կապակցութեամբ է արտայայտուում Յորը, որսի փոխարէն «Ճանապարհին զուարճանալու» մասին պատմութիւնն աւարտելով «Որպէս օրէնն է թագաւորաց»-ին հարազատ «եւ նստէի իշխան. եւ բնակէի իբրեւ զթագաւոր ի մէջ զօրականաց» ձեւով (ԻԹ. 2... 25).

Ո՛ր առնէր զիս ըստ ամսոց ատուրցն առաջնոց,
յորս Աստուած պահէր զիս:
Յորժամ լուսաւոր էր նրագ նորա ի վերայ գլխոյ իմոյ:
Յորժամ լուսով նորա գնայի ի խաւարի:
Յորժամ կայի զուարեացեալ ի նանապարհի...
Ընտրէի զնանապարհս նոցա,
եւ նստէի իշխան. եւ բնակէի իբրեւ զթագաւոր ի մէջ զօրականաց:

Յորը եւ Արտաշէս արքան յիշում են այն ամենը, ինչն ասես անդարձ կորել եւ հեռացել է իրենցից՝ վերելում ասուածի հետ մէկտեղ վկայելով Յորի վաղնջական հարազատութիւնը հայկական միջավայրին:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Յոր, Արտաշէս, վիշապ, դեւ, ամպրոպ, կայծակ, կարկուտ, ձիւն

РЕЗЮМЕ

Статья посвящена комплексному анализу Книги Иова в контексте ближневосточного культурного ареала с особым акцентом на архаические пласты армянской переводной и мифологической традиции. Исходя из общепринятого в библеистике тезиса о внеизраильском происхождении памятника, автор рассматривает его не только в сопоставлении с месопотамскими и египетскими архетипами, но и сквозь призму армянского лингвокультурного субстрата.

Центральное место в исследовании занимает анализ географических и ономастических данных (страна Уз, этноним «миниец»), а также специфической метеорологической образности (гром, молния, лед, «мэг»). На основе классиче-

ского древнеармянского перевода (изд. О. Зограбяна, 1805) выявляется устойчивый теологический пласт, в котором образ Божества сближается с функциями индоевропейского бога-громовержца.

Впервые проводится детальный сравнительный анализ Книги Иова с фрагментами армянского эпоса об Арташесе и Артавазде, а также с мифологемами Ваагна и Вишапа. Автор демонстрирует глубокие структурные и формульные параллели в мотивах проклятия, утраты былого величия и лишения света, обосновывая существование органической связи между библейским текстом и культурным ландшафтом Армянского нагорья. Исследование предлагает новые аргументы в пользу переосмысления восточного генезиса Книги Иова в рамках армянской цивилизационной парадигмы.

SUMMARY

This article presents a comprehensive analysis of the Book of Job within the cultural sphere of the Ancient Near East, with particular emphasis on archaic layers of the Armenian translational and mythological tradition. Proceeding from the widely accepted biblical-scholarly thesis concerning the non-Israelite origin of the text, the study examines the Book of Job not only in comparison with Mesopotamian and Egyptian archetypes, but also through the prism of the Armenian linguistic and cultural substratum.

The central focus of the research is the analysis of geographical and onomastic data (the land of Uz, the ethnonym “Minian”), as well as specific meteorological imagery (thunder, lightning, ice, mist). On the basis of the classical Armenian translation (ed. by O. Zohrabian, 1805), a consistent theological layer is identified in which the image of the Deity is brought into close correspondence with the functions of an Indo-European thunder god.

For the first time, a detailed comparative analysis of the Book of Job and fragments of the Armenian epic about Artashes and Artavazd, as well as the mythological motifs of Vahagn and Vishap, is presented. The author demonstrates deep structural and formulaic parallels in the motifs of curse, loss of former greatness, and deprivation of light, proving the existence of an organic connection between the biblical text and the cultural landscape of the Armenian Highlands. The study offers new arguments in favor of rethinking the Eastern origin of the Book of Job within the framework of the Armenian civilizational paradigm.